«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Մասնակից՝ ՄԱՐԻԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավար՝ ՀՌԻՓՍԻՄԵ ԽՐԻՄՅԱՆ

Թեմա՝ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԻԿԼԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1. <<Երաժշտություն>> առարկայի բովանդակությունը……4

2. Երաժշտական դասավանդման գործընթացի ժամանակակից միտումները……9

3.Երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա……12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……17

ՀԱՎԵԼՎԱԾ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: Արդի ժամանակներում հիմնական մեթոդական նորարարությունները կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ, այսինքն փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ–որ մեկի կամ համակարգչի հետ: Այս ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ եզակի իրավիճակին: Բնական է, որ առանց մանկավարժական տեխնոլոգիաների փոփոխության, առարկայի գործընթացի բովանդակային վերակառուցման, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման հնարավոր չէ ինտեգրվել արդի կրթական համակարգին: Առավելապես հնարավոր չէ կազմակերպել սովորողների երաժշտական դաստիարակության գործընթացը:

Ուսումնասիրության նպատակը. Ուսումնասիրել ժամանակակակից դասվանդման միտումները երաժշտություն առարկայի շրջանակներում: **Ուսումնասիրության առարկա՝** երաժշտական դասավանդման գործընթացի ժամանակակից միտումները:

Ուսումնասիրության խնդիրները:

- Ներկայացնել <<Երաժշտություն>> առարկայի բովանդակությունը,
- ՈՒսումնասիրել երաժշտական դասավանդման գործընթացի ժամանակակից միտումները

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես ընդհանուր տրամաբանական, քննադատական, վերլուծական, այնպես էլ՝ համակարգակառուցվածքային, վերլուծություն:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, բուն նյութից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից :

Աշխատանքի ծավալը կազմում է 17 էջ:

1.<<ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթական դպրոցի սովորողների՝ երաժշտության ուսուցման և դաստիարակության աշխատանքներում շեշտը դրվում է դաստիարակչական կողմի, երաժշտության հուզական և ակտիվ ընկալման վրա: <<Երաժշտություն>> առարկայի հիմնական բովանդակությունն է կազմում այն երաժշտությունը, որի հիման վրա տարիների ընթացքում դաստիարակվում ու զարգանում է աշակերտը: Ուստի մեծ

կարևորություն է ստանում նյութի ճիշտ ընտրությունը և դասարան առ դասարան ծրագրերի կազմումը: Ընտրված նյութը պետք է լինի գեղարվեստորեն բարձրարժեք, հետաքրքիր, մանկավարժական որոշակի նպատակաուղղվածությամբ, համապատասխանի աշակերտի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին, հետաքրքրություններին, կատարողական հնարավորություններին: 1-4-րդ դասարաններում /տարրական դպրոց/ աշակերտները լսում և երգում են բազմաբնույթ և բազմատեսակ ստեղծագործություններ, կուտակում բազմապիսի երաժշտական տպավորություններ, երաժշտապես զարգանում, ձեռք բերում երաժշտություն ունկնդրելու և կատարելու փորձ, որոնք էլ ապագայում նպաստում են միջին դասարանների <<Երաժշտություն>> առարկայի չափորոշչային պահանջների կատարմանը: Առաջին դասարանի աշակերտները ծանոթանում են բազմատեսակ երգչային և նվագարանային ստեղծագործությունների: Դրանք երգեր են, պարեր, քայլերգեր, երաժշտական խաղեր, մանրանվագներ, որոնք երեխաները լսում են, երգում, քայլում, պարում ու խաղում:

Այդ երգերը, երաժշտական ստեղծագործություններն արտահայտում են աշակերտներին շրջապատող կյանքն իր բազմերանգ գույներով, երևույթներով ու դեպքերով, որոնք երեխաների մեջ առաջ են բերում համապատասխան զգացմունքներ, հույզեր, տրամադրություններ ու տպավորություններ և զարգացնում սովորողների երաժշտական կարողությունները, հմտությունները, տալիս որոշակի գիտելիքներ, նախապատրաստում երկրորդ դասարանի չափորոշչային պահանջների կատարմանը:

Երկրորդ դասարանի աշակերտները ծանոթանում են երգ, պար, քայլերգ պարզ ու մատչելի տեսակներին: Երաժշտության այս տեսակները սովորողների երաժշտական մտածողության զարգացման հիմքն են դառնում, քանի որ չկա երաժշտության մի բնագավառ, լինի դա օպերա, բալետ, թե սիմֆոնիա, ուր չլինի երգային, պարային, քայլերգային բնույթի հատվածներ: Երաժշտության այս պարզ տեսակները, որքան էլ ձևափոխվում են, միևնույն է, ճանաչվում են երաժշտական ստեղծագործությունների մեջ: Դրանով էլ երաժշտության ընկալումը դառնում է ավելի ակտիվ, ստեղծագործական ու վերլուծական: Այդ գործընթացն ավելի նկատելի է դառնում, երբ

սովորողները ծանոթանում են երաժշտության արտահայտչական միջոցներին: Երաժշտություն լսելիս և երգելիս աշակերտները համոզվում են, որ երաժշտությունը կարող է արտահայտել մարդկային տարբեր զգացումներ, նկարագրել բնության տարբեր երևույթներ:[1]

Երրորդ դասարանի աշակերտները ծանոթանում են, թե ինչպես են երգը, պարը, քայլերգը հնչում նվագարաններով և դառնում երգային, պարային և քայլերգային բնույթի ստեղծագործություններ: Աշակերտները, ծանոթանալով խոսակցական և երաժշտական ինտոնացիաներին, ավելի են խորացնում իրենց գիտելիքները, ընդարձակում երաժշտական տպավորությունները: Ավելի հասկանալի է դառնում, որ երաժշտությունն ինտոնացիոն արվեստ է, այն արտահայտում է մարդկային զգացումներ և տրամադրություններ, նկարագրում բնության երևույթներ: Երրորդ դասարանի աշակերտների ձեռք բերած երաժշտական փորձը, գիտելիքները կարծես ամփոփվում են, երբ նրանք ծանոթանում են երաժշտական ստեղծագործության կառուցվածքին: Այն սովորողներին հնարավորություն է տալիս իմանալու, թե ինչպես է երաժշտական միտքը կազմավորվում փոքրից մեծը գնացող սկզբունքով՝ մոտիվ, ֆրազ, նախադասություն, պարբերություն, որոնք ձևավորվելով ու զարգանալով դառնում են ավարտուն երաժշտական մտքեր, ամբողջական ստեղծագործություններ՝արտահայտելով ավելի խորը զգացումներ, նկարագրելով ավելի մեծ իրադարձություններ:

Ձեռք բերված տեսական գիտելիքները, կարողությունները և հմտությունները խորացվում ու կայունացվում են համապատասխան երաժշտական ստեղծագործությունների ունկնդրման և կատարման միջոցով:

Չորրորդ դասարանի աշակերտները ծանոթանում են հայկական ժողովրդական երաժշտության տեսակներին, թեմատիկային, կառուցվածքին, երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններին:

5-րդ դասարանում ավելի կոնկրետ է ուսումնասիրվում արվեստների փոխկապակցվածությունը և փոխներգործությունը: Աշակերտները իմանում են, որ առանց

[1] Մազմանյան Մ. Ս.,, Երևան, 1969
Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., 33 պլակատներ, Երևան, 1982
Гриншкун В.В, Краснова Г.А: 2021 г
Затямина Т.А., Издательство «Глобус», 2011г. 11. Критская Е. Д., Сергеева Г. П. 2008г.

գրականության, պոեզիայի հնարավոր չէ ստեղծել երգ, օպերա, բալետ, կանտատ և այլն: Նրանք գիտակցում են նաև, որ երաժշտությունը իր հերթին օգնում է գրականությանը, պոեզիային, որ երաժշտությունը հուզազգացմունքային լիցք է հաղորդում գրական կերպարներին և ուժեղացնում դրանց ներգործությունը մարդու վրա: Այդ իսկ պատճառով, եթե չլիներ երաժշտությունը՝ աղքատ կլիներ նաև գրականությունը, պոեզիան:[2] Հինգերորդ դասարանում աշակերտները իմանում են նաև, որ երաժշտությունը թատրոնում և կինոյում ունի կարևոր նշանակություն: Այն բացահայտում և լրացնում է թատրոնի և կինոյի բովանդակությունը՝ կադրերի, բեմանկարների /դեկորների/, դերասանների խաղի այն կողմերը, որոնք լիարժեք չեն կարողանում ներգործել դիտողի վրա: Այստեղ է, որ երաժշտությունը կարծես թե լրացնում և ուժեղացնում է գեղարվեստական կերպարների հուզազգայական կողմը, առանձին տեսարանների արտահայտչականությունը, բնութագրում հերոսներին, որի շնորհիվ դիտողի ընկալումը դառնում է ամբողջական: Վերջապես, աշակերտներն իմանում են, որ երաժշտության, գրականության, պարարվեստի, կերպարվեստի միասնությունից են ծնվել օպերան, բալետը, թատրոնը և կինոն:

Վեցերորդ դասարանում աշակերտները ավելի են խորացնում իրենց տեսական գիտելիքները, երբ իմանում են, որ կոմպոզիտորը օգտվելով երաժշտական լեզվի արտահայտչական հարուստ հնարավորություններից ստեղծում է մեղեդիներ, որոնք արտահայտում են բազմապիսի զգացմունքներ ու տրամադրություններ: Այդ մեղեդիները դառնում են <<երաժշտական կերպարներ>>, որոնք ներգործելով ունկնդրի վրա՝ նրա մեջ առաջ են բերում համապատասխան զգացմունքներ ու տրամադրություններ: Դեռ տարրական դասարաններում սովորողները հաճախ են օգտագործել <<երաժշտական կերպար>> հասկացությունը, այն կապելով ավարտուն <<երաժշտական միտք>> արտահայտող երգերի և մանրանվագների հետ: Վեցերորդ դասարանում <<երաժշտական կերպար>> հասկացությունը աշակերտները գիտակցում են, ապա լսում այնպիսի ստեղծագործություններ, որոնք ավելի խորը տրամադրություններ են արտահայտում: Նրանք <<երաժշտական կերպարներ>> են

[2] Մազմանյան Մ. Ս.,, Երևան, 1969
Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., 33 պլակատներ, Երևան, 1982
Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Երևան, 2004:
Гриншкун В.В, Краснова Г.А: 2021 г
Затямина Т.А., Издательство «Глобус», 2011г. 11. Критская Е. Д., Сергеева Г. П. 2008г.

փնտրում այնպիսի ժանրերում, ինչպիսիք են օպերան, բալետը, սիմֆոնիան, կանտատը, կոնցերտը, սոնատը, որոնց անունները ծանոթ են նախորդ դասարաններից: Այս դասարանում ավելի են խորացնում իրենց գիտելիքները ոչ միայն այդ ժանրերի մասին, այլև լսողական փորձ են ձեռք բերում: Յոթերորդ դասարանում աշակերտները ծանոթանում են դասական, ջազային և հանրամատչելի երաժշտություն հասկացություններին: Նպատակն է երաժշտության այդ երեք տեսակների համադրման միջոցով աշակերտների մեջ զարգացնել կյանքում հնչող բազմատեսակ ու խայտաբղետ երաժշտության մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

Ցույց է տրվում, որ դասական երաժշտությունն ավելի խորը զգացմունքներ, հույզեր է առաջացնում մարդկանց մեջ, հարստացնում նրանց հոգևոր աշխարհը, զարգացնում գեղագիտական ճաշակ: Նման երաժշտությունը լուրջ վերաբերմունք է պահանջում իր նկատմամբ: Դրան հակառակ՝ հանրամատչելի երաժշտությունը զվարճական է, և ջանք չի պահանջում ընկալման համար: Աշակերտները իմանում են, որ դասական երաժշտության շրջանակներում կա բարդ և պարզ, հանրամատչելի ժանրեր, օպերայի և սիմֆոնիայի կողքին կան երգեր և ռոմանսներ (Շուբերտի, Շումանի, Չայկովսկու, Ռ. Մելիքյանի և այլոց): Իմանում են նաև, որ հաճախ դասական երաժշտության մեջ ներթափանցում են ջազի տարրեր (օրինակ՝ Ջ. Գերշվինի <<Դաշնամուրային կոնցերտը>>, կամ՝ <<Ռապսոդիան>> բլյուզի ոճով դաշնամուրի համար):

Աշակերտները լսում են ստեղծագործություններ երաժշտական տարբեր ժանրերից: Նրանք ծանոթանում են նաև ժամանակակից երաժշտական արվեստի տեսակներից՝ ջազի հետ:

2.ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթակարգի ներդրման հաջողությունն ապահովող հիմնական գործոնը ուսուցիչների պատրաստման և մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրականացումն է: Կրթակարգով կարևորվում է սովորողի ոչ միայն գիտելիքների, այլև կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորումը, ուստի ուսուցիչը պետք է, գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Մանկավարաժական կադրերի պատրաստման և վերապատրաստման ուսումնական ծրագրերը պետք է նպաստեն, որ ուսումնառության արդյունքում մանկավարժը տիրապետի.

1. Իր աշխատանքը ծրագրելու կարողությանը. այդ թվում՝

ա) ուսումնական գործընթացն արդյունավետ ծրագրելու. առանձին դասընթացների, թեմատիկ միավորների և դասերի պլաններ մշակելու.

բ) ինքնուրույն կամ գործընկերների հետ միասին ուսումնական նյութեր ստեղծելու:

2. Ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու կարողությանը, այդ թվում՝

ա) անհատականացված ուսուցում իրականացնելու.

բ) սովորողի տարիքային, հոգեբանական և կազմաբնախոսական առանձնահատկությունները, անհատական և խմբային գործունեության շարժառիթներն ու վարքագիծը հաշվի առնելու.

գ) կրթության բովանդակության յուրացումն ապահովող ուսուցման ժամանակակից մեթոդներ և հնարներ ներդնելու.

դ) ուսուցման համար բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայր ստեղծելու:

Ժամանակակից կրթական համակարգում առաջնայինը ոչ թե տեղեկատվությունը յուրացնելը պետք է լինի, այլ այն ուսումնասիրելն ու վերլուծելը: Նման մոտեցումը

դպրոցից պահանջում է չսահմանափակվել տեղեկատվության ավանդական աղբյուրներով՝ ուսուցիչ, դասագիրք, ուսումնական ձեռնարկներ և այլն: Հանրակրթության պետական կրթակարգը սահմանում է, որ կրթության ոլորտում ՏՀՏ-ների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն:

Համակարգիչը ժամանակակից դպրոցում համարվում է ուսուցման և ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, իսկ ինֆորմատիկան՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող առարկա: ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը. ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: ՏՀՏ-ները սերտորեն առնչվում են բոլոր առարկաներին և նրանց դասավանդմանը: Հաշվի առնելով կրթակարգի պահանջները, դպրոցում պետք է ստեղծել էլեկտրոնային գրադարան: Սա մի յուրահատուկ ռեսուրս-բազա է, որը ստեղծվում և կիրառվում է ուսումնառության ընթացքում: Համակարգիչը դառնում է նաև դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների մասին տվյալների կուտակման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման գործիք: [3]

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս.

1. ինքնուրույն տեղեկատվություն որոնել, հավաքել, ուսումնասիրել եւ դասակարգել
2. տեխնոլոգիական համակարգերը, տեղեկատվությունն ու ծրագրերը օգտագործել
3. ուսումնառության մակարդակը բարձրացնել
4. իրական կյանքում խնդիրներ լուծել եւ տեղեկացվածության շնորհիվ որոշումներ կայացնել:

ՏՀՏ տեխնոլոգիաներն օգնում են նաեւ.

[3] 1. Մազմանյան Մ. Ս.,, Երևան, 1969
Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., 33 պլակատներ, Երևան, 1982
ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան 2014
Նոյյան Տապան, Երևան, 2005:
Յուզբաշյան Յու.Վ., Մկրտչյան Ա.Ճ., Երևան 1986

- նյութի նկատմամբ հետաքրքրություն զարգացնել
- միավորել զգայական պատկերները, միջառարկայական զուգահեռները եւ իրական կյանքի հետ կապը
- ուսուցումը հարմարեցնել սովորողների ուսումնառության անհատական ոճերին:
- Տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում կարող են հանդես գալ որպես
- դասավանդման գործիք ուսուցչի համար ,
- հետազոտության գործիք ուսուցչի եւ աշակերտի համար ,
- դասի կազմակերպման, կառուցման գործիք,
- ուսումնառության և գործունեության գործիք:

Ժամանակակից երաժշտության դասի ընթացքում կիրառվում են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, համակարգչային տեխնոլոգիաներ, օգտագործվում են էլեկտրոնային երաժշտական գործիքներ: Երաժշտության դասին բնորոշ է ստեղծագործական միջավայրի ստեղծումը, քանի որ երաժշտության դասերի բովանդակությունը կազմված է հույզերից և դրանց սուբյեկտիվ փորձից՝ տարբեր մեթոդների, աշխատանքի տեսակների և նոր մուլտիմեդիա գործիքների միջոցով: Դպրոցում երաժշտություն սովորելու համար ուսումնական պլանը յուրաքանչյուր դասարանում հատկացնում է շաբաթական մեկ ժամ, բացի առաջին դասարանում, որտեղ երկու դասաժամ է: Այս ժամը դպրոցականներին հնարավորություն է տալիս ծանոթանալ միայն երաժշտական ստեղծագործությունների հիմնական հասկացություններին և հիմնական բովանդակությանը, ինչը բավարար չէ բազմակողմանի ներդաշնակ անհատականության ձևավորման համար: Դասում ավելի շատ տեղեկատվության յուրացման խնդիրը լուծելու համար, հետաքրքրության բարձրացման հետ մեկտեղ, ուսուցման արդյունավետությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները ներկայումս շատ կարևոր դեր են խաղում երաժշտության դասերին:

Յուրաքանչյուր տեխնոլոգիայի կիրառման դեպքում ուսուցիչը պիտի նկատի ունենա.
- դրա գործադրման մակարդակը,
- փիլիսոփայական հիմնավորումը,
- գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգը,
- կրթության բովանդակության առանձնահատուկ բնույթը,
- ուսուցման կազմակերպման ձևերը,
- ուսուցման կազմակերպման գերակշռող մեթոդը,

• սովորողների որակական հատկանիշները:

3.ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱ

<<Երաժշտություն>> առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Երեխաների երաժշտական զարգացումը, դաստիարակությունը խիստ կապի մեջ են նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ: Հաշվի առնելով երեխաների՝ երաժշտության ընկալման ակտիվությունը և հետաքրքրությունների լայն շրջանակը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տարրական դասարանցիների երաժշտական դաստիարակության վրա, այլապես դժվար կլինի կազմակերպել միջին դասարանցիների երաժշտական դաստիա-րակության գործընթացը:

5-7-րդ դասարաններում տեղի է ունենում սովորողների թե՛ մտավոր ու հոգևոր, և թե՛ ֆիզիկական ու գեղագիտական բուռն զարգացում՝ կապված այդ դասարան-ցիների տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այս շրջանում ավելի է ընդլայնվում մտահորիզոնը, ակտիվանում երևակայությունը, երաժշտական ստեղծագործական և վերլուծական մտածողությունը, գիտելիքների, կարողություն-ների, հմտությունների, արժեքային համակարգի զարգացման շրջանակները, երաժշտության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը, գիտակցական վերաբերմունքը, սիրո զգացմունքը, մասնավորապես, սեր՝ հանդեպ մարդը, շրջապատը, բնությունը, հայրենիքը և այլն:

Այս ամենը հնարավորություն են տալիս 5-7-րդ դասարանցիներին մարդկային փոխհարաբերություններում, շրջապատում ճիշտ կողմնորոշվելու, գեղեցիկը զգալու, լինելու ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, բարեկիրթ, հայրենասեր:

Չափորոշիչը մշակելիս հաշվի է առնվել երեխաների երաժշտական դաստիարակության բնագավառում համաշխարհային առաջավոր փորձը:

Այսպես, օրինակ, կոմպոզիտոր-մանկավարժներ Դմիտրի Կաբալևսկու /Ռուսաստան/ ուսուցման թեմատիկ կառուցվածքը, որտեղ նյութը համախմբվում է մի հիմնական թեմայի շուրջ և ուսուցման ընթացքը դասից դաս նվիրվում է տվյալ

թեմայի բազմակողմանի բացահայտմանը, Զոլտան Կոդայի /Հունգարիա/ մանկավարժական բեղուն ավանդույթները, որոնք հենվում են ժողովրդական երաժշտության նմուշների և արդյունավետ մեթոդների լայն կիրառման վրա, Էմիլ Ժակ-Դալկրոզի /Շվեյցարիա/ կիրառած երաժշտառիթմական շարժումն իբրև երաժշտական ընդունակությունների և մարմնի շարժումների զարգացման միջոց, Կարլ Օրֆի /Ավստրիա/ առաջարկած՝ երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման և մանկական նվագարաններով նվագելու պրակտիկան և այլն:

Երգարվեստը զարգացած, ազգային ինքնագիտակցությամբ ուժեղ, ստեղծագործ անհատականություն դաստիարակելու արդյունավետ միջոց է, որը հրատապ է դարձնում այն դպրոցում ուսուցանելու և նրա դաստիարակչական ներուժի ավելի խորը ուսումնասիրությունը: Այս ներուժը բացահայտելու համար յուրաքանչյուր մանկավարժի անհրաժեշտ են որոշակի մանկավարժական մեթոդներ և տեխնիկա: Ուսումնասիրել երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա, նախևառաջ՝ մենք հասկանում ենք երաժշտությամբ, երգարվեստով երաժշտական դաստիարակությունը, որը գեղագիտական դաստիարակության կարևոր բաղկացուցիչն է: Ապա առաջադրվում է երաժշտության դասավանդման մանկավարժական մեթոդի և դաստիարակչական բնույթի խնդիրը. մենք այն դիտարկում ենք որպես ազգային արվեստի ազգապահպան գործառույթի արդյունավետ իրականացման հիմական գործոններից մեկը: [4] Դպրոցում երաժշտության դասավանդման արդյունավետության համար նշանակալի է միջառարկայական կապերի ստեղծումը, օրինակ՝ գրականության, նկարչության, պատմության հետ: Ասպես՝ Կոմիտասի երաժշտարվեստին երեխաներին հաղորդակից դարձնելով՝ կարելի է իրականացնել ազգային երգ ու պարի դաստիարակչական գործառույթները՝ բացահայտելով նաև որոշակի երաժշտական գործիքի (թառ, դաիրա, ֆլեյտա և այլն) հնչողության առանձնահատկությունները, դրա ծագումնաբանությունը կամ նախապատմությունը, դրանց ստեղծման դարաշրջանի իրադարձությունները, դարերի ընթացքում դրանց կրած փոփոխությունները, ձևավորելով նաև դրա կարևոր նշանակության երեխաների

[4] ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան 2014
Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Երևան, 2004:
Гриншкун В.В, Краснова Г.А: 2021 г
Затямина Т.А., Издательство «Глобус», 2011г. 11. Критская Е. Д., Сергеева Г. П. 2008г.

գիտակցումը: Միջառարկայական կապերի միջոցով երաժշտություն դասավանդումն արդյունավետ կարող է լինել նաև «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական հնարավորությունների կիրառման ճանապարհով: Օրինակ՝ տարվա եղանակների մասին երաժշտական, ինչպես նաև՝ տարվա եղանակներ թեմայով նկարչական գործունեության (կերպարվեստի) նպատակային իրականացումը մի կողմից՝ կօգնի երեխաներին սովորեցնել գեղեցիկ վերարտադրել տարվա եղանակների գույների համադրությունը, զարգացնել վառ, գունեղ նկարներից ուրախություն, բերկրանքի զգացումներ ապրելու և այն գեղագիտորեն արտահայտելու երեխաների կարողությունը, մյուս կողմից՝ ընդլայնելու և հարստացնելու նրանց պատկերացումներն ու գիտելիքները տարվա եղանակների մասին: Այս նպատակով՝ կարելի է նաև օգտագործել դիդակտիկ պարագաներ, օրինակ՝ տարվա եղանակները պատկերող նկարների ժողովածու, Մ. Սարյանի «Ծաղիկներ» կամ այլ գեղանկարչի ստեղծագործությունների վերատպություն: Մեծանուն գեղանկարչի հայրենասիրական ոգով տոգորված դիմանկարները, բնանկարները, նրա կտավների վառ գունապնակը, դրանց դիտումը հնարավորություն կտա երեխաներին ինքնուրույն գնահատել և ճիշտ արժևորել համամարդկային կարևոր արժեքները՝ մարդասիրություն, հայրենասիրություն, հայրենի եզերքի ու հոգևոր արժեքների ճանաչում և կարևորում, գործի նվիրում, կյանքում բարին գործելու, մնայուն արժեքներ ստեղծելու կարևորում և գիտակցում: Նման աշխատանքը նաև նպաստում է դպրոցականների գեղագիտական ճաշակը և արժեքային համակարգը ձևավորելուն: Այն նաև կարևոր է երաժշտագեղագիտական դաստիարակությունը ոչ միայն գիտելիքներ հաղորդելու, այլև գեղագիտական հույզերի և զգացմունքների դաստիարակման, գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ փոխանցելու, նկարչական ունակությունները և կարողությունները, երաժշտական ընդունակությունները զարգացնելու, երաժշտառիթմիկ կարողությունները ձևավորելու լավագույն միջոց դարձնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների արդյունքում հիմնականում,հանգել ենք որոշակի եզրակացությունների, որոնք հետևյալն են.

- ✓ Կարելի է եզրակացնել, որ երաժշտության դասավանդման և երաժշտագեղագիտական դաստիարակության հիմնաքարը ազգային երգարվեստի կատարման կարևոր ու անհրաժեշտ հմտությունների ձևավորումն ու զարգացումն է, հաղորդակցումը ժողովրդական ու ազգային երաժշտական ժառանգությանը: Երաժշտության դասավանդումը դպրոցում պետք է երեխաների գեղագիտական, բարոյական, մտավոր և ֆիզիկական դաստիարակության, լավը լինելու ձգտում ձևավորելու միջոց դարձնել: Իսկ այս խնդիրները կարգավորելու և ուսումնական-դաստիարակչական գործընթացը դրանց լուծմանը նպատակաուղղելու համար մեծապես կարևորվում է համապատասխան կրթական պայմանների ստեղծումը, որը ենթադրում է ուսումնական գործընթացի մեթոդական զինում և դասապրոցեսում ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակների, նորարական միջոցների, մոտեցումների, խթանող մեթոդների ներառում: Ստորև բերվում է մեր կողմից պլանավորված օրինակելի դասի պլան՝ միջառարկայական կապի ստեղծման կարևորմամբ:
- ✓ Երաժշտությունը որպես արվեստի տեսակ գոյություն է ունեցել մարդկության գոյության ողջ ընթացքում՝ սկզբնավորվելով դեռևս անտիկ ժամանակներից: Դպրոցում երաժշտության դասավանդման գործընթացն ուղղվում է դպրոցականների երաժշտագեղագիտական, բարոյական, ֆիզիկական, հայրենասիրական դաստիարակությանը: Այս հարցում մենք կարևորում են միջառարկայական կապերը և այդ նպատակով առաջարկում նաև ուսումնադիտողական, դիդակտիկ նյութերի ու պարագաների կիրառումը, ստեղծագործական և կատարողական գործունեության իրականացումը: Ուսումնադիտողական նյութերի և դիդակտիկ պարագաների գործնական ցուցադրության օգտագործումը տեսողական ընկալմամբ մատուցվող նյութի արդյունավետության, ինչպես նաև գեղեցիկն ընդօրինակելու լավագույն միջոցներից է:

- ✓ Երաժշտության դասավանդման գործընթացի արդյունավետությունն ապահովելու հիմնական միջոցներից է միջառարկայակն կապերի ստեղծումը: Նման գործունեության միջոցով դպրոցականներն ստանում են ոչ միայն երաժշտական, այլև էկոլոգիական, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական, մտավոր, գեղագիտական դաստիարակություն և դրանց համապատասխան գիտելիքներ, ձևավորվում են գործունեության այդ ձևերին բնորոշ կարողություններ և հմտություններ: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք դպրոցում երաժշտական գիտելիքների ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպել ինտեգրված գործունեության միջոցով:
- ✓ Երաժշտական գործունեությունն իբրև ուսուցման և դաստիարակության միջոց առավել արդյունավետ կլինի եթե իրականացվի համակացված պարապմունքների ընթացքում՝ այլ մեթոդների ու մեթոդիկաների, խաղերի, 22 երգի, գրական ստեղծագործությունների, զննական պարագաների օգտագործման հետ զուգակցումով: Դպրոցում երաժշտության դասավանդումը ուղղվում է նաև դպրոցականների զգացմունքային, մտավոր, գեղագիտական զարգացմանն ու դրանցում ներառվող համապատասխան կարողությունների, հմտությունների և ունակությունների ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մազմանյան Մ. Ս.,, Երևան, 1969

2. Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., 33 պլակատներ, Երևան, 1982

3. ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան 2014

4. Նոյյան Տապան, Երևան, 2005:

5. Յուզբաշյան Յու.Վ., Մկրտչյան Ա.Շ., Երևան 1986

6. Յուզբաշյան Յու.Վ: Երևան, 1996

7. Ս. Խաչատրյան , Երևան 2020

8. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Երևան, 2004:

9. Гриншкун В.В, Краснова Г.А: 2021 г

10. Затямина Т.А., Издательство «Глобус», 2011г. 11. Критская Е. Д., Сергеева Г. П. 2008г.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան՝ *Երաժշտություն*

Դասարանը՝ *4-րդ*

Դասի թեման՝ *Արամ Խաչատրյանի կյանքն ու ստեղծագործությունը*

Դասի նպատակը՝

- *ծանոթացնել կոմպոզիտորին և նրա ստեղծագործական գործունեությանը,*

✓ *ձևավորել Խաչատրյանի ստեղծագործությունները ունկնդրելու, տարբերելու և վերլուծելու կարողություններ ու հմտություններ,*

✓ *զարգացնել կոմպոզիտորի ստեղծագործություններում ժողովրդական երաժշտությունը ճանաչելու և մեկնաբանելու կարողություններ:*

Ակնկալվող արդյունքները՝

- ✓ *սովորողները* ***կծանոթանան*** *Արամ Խաչատրյանի կյանքին ու ստեղծագործություններին,*
- ✓ ***կիմանան*** *համաշխարհային արվեստում Ա. Խաչատրյանի կարևոր դերի մասին,*
- ✓ ***կկարողանան*** *ունկնդրել, տարբերել և վերլուծել Խաչատրյանի ստեղծագործությունները:*

Դասի բնույթը՝ *անցած նյութն ամրապնդող, ընդհանրացնող և նոր նյութի հաղորդման դաս:*

Դասի կահավորումը՝ *համակարգիչ, երևակիչ և մեծ էկրան, ակորդեոն:*

Դասի ընթացքը.

1. *Անցած նյութի ամրապնդում և ընդհանրացում՝ երգերի կատարմամբ*
2. *Նոր նյութի հաղորդում*
3. *Նոր երգի ուսուցանում*
4. *Դասի ամփոփում և գնահատում*

Նոր երգի ուսուցանում

Դասի վերջում ուսուցանել «Քելե՛, քելե՛» երգը:

Դասի ամփոփում և գնահատում

Ամփոփել դասը և գնահատել մի քանի աշակերտի: